

Յիշատակի ծաղիկներու փունջեր թարմ  
 Քու շիրիմիդ վըրայ սըփռել կ'ուղարկեմ.  
 Փունջեր՝ ցօղուած արցունքներուս շիթերէն,  
 Չոր հեռաւոր բարեկամեդ կը բերեն:

*1903, Յունուար*

#### 4. ՆՈՐ ՏԱՐԻՆ

Այս գիշեր հագուած, սգուած նոր տարին  
 Առտուան լոյսին կըսպասէ տենդոտ.  
 Ոգիներ անդարձ կորզեցին տարի՛ն  
 Մեր գրկէն հինին ձայները ծանօթ:

Նոր տարւոյ ընծայ պայծառ լուսինկան  
 Սագեր է գիւղին լեռները բոլոր.  
 Երգերը ծերին, ճիչերը մանկան  
 Կ'արծագանգեն թունդ խագերով մոլոր:

Իղծերու շարք մը պլլուած սրտին<sup>a</sup>  
 Վառ յոյգերու մէջ կ'օրրէ զայն ուժգին.  
 Բորբոքած հուրքովն յոյգերու անշէջ  
 Կը ծփան սիրտերն ըղձանքներու մէջ:

Գիշերուայ վերջին պահերուն լռին  
 Ձայներն ու լոյսեր յանկարծ կը մարին.  
 Եւ բեհեզներովն կապոյտ կամարին  
 Պճնըւած աշխարհ կու գայ նոր տարին:

*1902, Դեկտեմբեր*

#### 5. ԱՍՏՂԵՐԸ

Լոյսի բիծեր ծիրանի  
 Կ'ասղնտեն քօղքը մուրփին.  
 Լուսնի ցոլքեր կ'անհետին  
 Խորքը ծովուն հովանի:

Կապոյտը կը ծածանի  
 Կամարին ջինջ ու հանդարտ.